



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

“ 09 ” Թարթի 2024 թվական

N 365-ՂԿ

ք. Երևան

«ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ-ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ»
ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի
դեկտեմբերի 28-ի N 2323-Ն որոշման 13-րդ կետի «ա» ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել 2024 թվականի «Մասնագետների պատրաստման բարձրագույն
ուսումնական հաստատություններ-մասնավոր հատված համագործակցություն» միջոցառման
ծրագիրը համաձայն Հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի
Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Ռուբեն
Սիմոնյանին:

3/1/2024

X

ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Signed by: HAYRAPETYAN MKHITAR 2505901047

ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

**«ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ-ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ»
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետությունում բարձր տեխնոլոգիական և տեղեկատվական հասարակության կայացմանն աջակցելու նպատակով Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) 2020-2023 թվականներին իրականացրել է «Մասնագետների պատրաստման բարձրագույն ուսումնական հաստատություններ-մասնավոր հատված համագործակցություն» միջոցառման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր):

Ծրագրի շրջանակներում նոր տեխնոլոգիական կենտրոնների/լաբորատորիաների ստեղծման ու զարգացման, ինչպես նաև արդեն իսկ գոյություն ունեցող կենտրոնների արդյունավետ գործունեության ապահովման նպատակով բավարար տեխնոլոգիական և մարդկային ռեսուրսներ ներգրավելու համար Երևանում, Հայաստանի Հանրապետության մարզերում և Արցախում պատրաստվել կամ վերապատրաստվել է ավելի քան 9500 մասնագետ, իսկ շուրջ 90 մասնագետ հնարավորություն է ստացել գործնական պրակտիկա անցնել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի կազմակերպություններում:

Դասընթացներն իրականացվել են առցանց և լսարանային դասավանդման միջոցով:

Ոլորտի զարգացման տրամաբանական շարունակականությունն ապահովելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել զարգացնել մասնագետների գիտելիքներն ու հմտությունները՝ դրանք համապատասխանեցնելով աշխատանքի շուկայի պահանջներին՝ միևնույն ժամանակ ապահովելով տեխնոլոգիաների ոլորտում մասնագետների մեծ հոսք, ինչը հնարավորություն

կատեղծի զարգացնելով տեխնոլոգիական արդյունաբերությունը պատրաստել պահանջված մասնագետներ:

Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշման հավելվածի «Տնտեսություն» գլխի 2.3 կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը նպատակադրվել է Հայաստանի Հանրապետությունը դարձնել բարձր տեխնոլոգիական արդյունաբերական երկիր, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 1902-Լ որոշման Հավելված 1-ով բարձր տեխնոլոգիական արդյունաբերության ոլորտը հայտարարվել է Հայաստանի տնտեսության զարգացման գերակա ճյուղերից մեկը, որի զարգացումը սկզբունքային ներդրում է ունենալու գիտելիքահեն տնտեսությանն անցնելու գործընթացում:

Բարձր տեխնոլոգիական ոլորտում այսօր իրականացվող ծրագրերը մեծապես նպաստում են Հայաստանի Հանրապետության տնտեսության արտադրողականության և մրցունակության բարձրացմանը, մեծ հավելյալ արժեք ապահովող աշխատատեղերի ստեղծմանը, գիտելիքահեն տնտեսության ձևավորմանն ու զարգացմանը, օտարերկրյա ներդրումների ներգրավմանը, տեղական ընկերությունների արտադրանքի և ծառայությունների արտահանմանն ու համաշխարհային շուկայում Հայաստանի Հանրապետության՝ որպես զարգացած տեղեկատվական, հեռահաղորդակցման և բարձր տեխնոլոգիաների ոլորտ ունեցող երկրի վարկանիշի բարձրացմանը: Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի սկսնակ ընկերությունների ձևավորումը և նոր աշխատատեղերի ստեղծումը խթանելու նպատակով իրականացվում են բազմակողմ ծրագրեր՝ կրթական, գիտական, բիզնես և այլ ուղղություններով:

2. ՆՊԱՏԱԿ

2. Նախարարության ռազմավարական նպատակներից են բխում տեղական և համաշխարհային շուկայի պահանջներին բավարարող մասնագետների մշտական հոսքի ապահովումը, տեխնոլոգիական ոլորտում մասնագետների վերապատրաստման կարիքների ուսումնասիրումը, կադրերի վերապատրաստման համապատասխան ծրագրի մշակումը և վերապատրաստման դասընթացների իրականացումը:

Ծրագրի շրջանակներում հանդիպումներ են կազմակերպվել ոլորտի մի շարք կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Քննարկվել են դասընթացների կազմակերպման հեռանկարներն ու համագործակցության եզրերը:

Ծրագրի 2020-2021 թվականներին նպատակ է ունեցել մասսայական կրթություն իրականացնելու միջոցով տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին ծանոթացնել հասարակության լայն շերտերին՝ ապահովելով նոր մասնագետների հոսք դեպի ոլորտ: 2022 թվականին տեղեկատվական տեխնոլոգիաների վերաբերյալ բազային գիտելիքներ ունեցող բազմաթիվ մասնագետների առկայության պարագայում Միջոցառումը մշակվել է՝ հաշվի առնելով ոլորտում մեծ պահանջարկ ունեցող մասնագիտությունները: 2023 թվականին Միջոցառման իրականացման հիմնական խնդիրն է եղել աշխատանքի շուկայում առկա մասնագետների պահանջարկը բավարարելու նպատակով պատրաստել մասնագետներ կամ վերջիններիս հնարավորություն տալ վերամասնագիտանալու՝ այդպիսով լրացնելով աշխատանքի շուկայում առկա բացը:

3. 2024 թվականին Ծրագրի հիմքում Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվական տեխնոլոգիաների և ինժեներության ոլորտներում կարողությունների զարգացումն է, ինչի համար նպատակ է դրվել՝

- 1) Ուսումնասիրել Հայաստանի Հանրապետությունում վերոնշյալ ոլորտների պահանջարկը՝ վեր հանելով այն ուղղությունները, որոնք բավականաչափ զարգացած չեն՝ պայմանավորված համապատասխան մասնագետների բացակայությամբ,
- 2) Ուսումնասիրել հայաստանյան գիտական շրջանակներում առկա և ոչ օպտիմալ օգտագործվող պոտենցիալը և ստեղծել վերջինս առևտրայնացնելու հնարավորություններ,
- 3) Ուսումնասիրել միջազգային կրթական կենտրոնների և ինստիտուտների կողմից առաջարկվող դասընթացները, գնահատել Հայաստանի Հանրապետությունում դրանց կիրառելիության նպատակահարմարությունը,
- 4) Մասսայական կրթություն իրականացնելու միջոցով Հայաստանի Հանրապետության մարզերի բնակիչներին մատուցել ոլորտի վերաբերյալ հիմնական գիտելիքներ:

3. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԲՅՈՒՋԵՆ

4. Ծրագրի նպատակներին հասնելու համար նախատեսվում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում իրականացնել ոլորտի շուրջ 1700 մասնագետի ուսուցման և վերապատրաստման համար նախատեսված ծրագրավորում կամ ինժեներություն ուղղություններով դասընթացներ:

5. 2024 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված է 613 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ:

6. Ծրագրի 1-ին բաղադրիչում՝ «**Մասսայական ուսուցում**» նախատեսվում է ներգրավել շուրջ 300 մասնակից Հայաստանի Հանրապետության մարզերից, ինչի համար կպահանջվի 30 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ: Ծրագիրը պետք է իրականացվի յուրաքանչյուր մարզում ուսումնական կենտրոնի առկայությամբ (համապատասխան սարքավորումներով և տեխնիկայով հագեցած մասնաշենք): Սույն բաղադրիչը կիրականացվի փորձնական (պիլոտային) տարբերակով՝ ընդգրկելով 3 մարզ:

7. 2-րդ բաղադրիչով՝ «**Կարողությունների զարգացում**», նախատեսվում է իրականացնել դասընթացներ այն ուղղություններով, որոնք ստացվել են Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի և/կամ ինժեներական գործունեություն ծավալող կազմակերպություններից: Բաղադրիչի իրականացման նպատակով կբացվի վաուչերային ֆոնդ, որի բյուջեն կկազմի 200 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ:

8. 3-րդ բաղադրիչը՝ «**Որակավորման բարձրացում**», նախատեսվում է իրականացնել համաշխարհային ճանաչում ունեցող կրթական կենտրոնների միջոցով: Վերոնշյալ բաղադրիչով լրիվ կամ մասնակի դրամաշնորհներ կտրամադրվեն Նախարարության կողմից նախապես հրապարակված կրթական կենտրոնների ցանկերում համապատասխան ուղղություններով (առցանց դասընթացներ) ընդունելության փուլն անցած և նախապես ձևավորված մրցութային հանձնաժողովի կողմից հավանություն ստացած մասնագետների համար: Հաջողությամբ ավարտած շուրջ 100 մասնագետի վերապատրաստման նպատակով կտրամադրվի 80 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ:

9. 4-րդ բաղադրիչը՝ «**Գործնական հմտությունների կատարելագործում**», որի շրջանակներում կիրականացվեն «Հաքաթոններ»: Հաքաթոնները բաղկացած կլինեն երկու մասից: 1-ին մասում կկազմակերպվեն միջոցառումներ, որոնց ժամանակ բիզնեսի ներկայացուցիչները խնդիրներ կդնեն պատահական ձևավորված թիմերի առջև և վերջիններս կմրցեն վերոնշյալ խնդիրների լուծման իրենց տարբերակներով: 2-րդ մասում կկազմակերպվեն ֆորումներ, որոնց ընթացքում կիրականացվեն քննարկումներ Նախարարության, բիզնեսի, ստարտափերի, ուսանողների, գիտական և կրթական կազմակերպությունների մասնակցությամբ, որոնց ժամանակ մասնակիցները հնարավորություն կունենան կիսվել իրենց փորձով, ներկայացնել նոր առաջարկեր, ինչպես նաև միջոցառման արդյունքում կստեղծվեն կապեր հաստատելու նոր հնարավորություններ բիզնեսի և գիտակրթական ոլորտի

ներկայացուցիչների միջև: Երեք լավագույն թիմերին «Հաքաթոնի» արդյունքում կտրամադրվեն մրցանակներ՝ առավելագույնը 10 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամի չափով, իսկ միջոցառման կազմակերպման բյուջեն կկազմի 70 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ:

10. 5-րդ բաղադրիչ՝ «**Հայ-հնդկական SCS ուսումնական կենտրոնի գործունեության ապահովման, SS դասընթացների կազմակերպման**» ծրագիր: 2023 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվել են թվով 110 (նախատեսված 60-ի փոխարեն) կարճաժամկետ և երկարաժամկետ մասնագիտական դասընթացներ ու սեմինարներ՝ ներգրավելով շուրջ 1115 (նախատեսված 550-ի փոխարեն) մասնակից:

Հաշվի առնելով Հայաստանում SS ոլորտի մասնագիտական ներուժի առաջխաղացման ուղղությամբ այս կենտրոնի դերակատարությունը և իրականացվող ուսումնական ծրագրերի շարունակականության ապահովման կարևորությունը, ինչպես նաև հիմք ընդունելով վերը նշված հուշագրով ՀՀ կառավարության ստանձնած պարտավորությունների կատարման անհրաժեշտությունը՝ կենտրոնի դասընթացները նախատեսվում են իրականացնել նաև 2024 թվականին: 2024 թվականին ծրագրով նախատեսվում է վերապատրաստել ևս 550 մասնագետ: Կենտրոնի գործունեության պահպանման նպատակով 2024 թվականին ծրագրին կհատկացվի 13 միլիոն ՀՀ դրամ:

11. 6-րդ բաղադրիչ՝ «**«Հայկական վիրտուալ կամուրջ» ծրագրի իրականացում**: 2019 թվականի սեպտեմբերի 24-ին ստորագրված «**«Հայկական վիրտուալ կամուրջ» ծրագիրը իրականացնելու**» վերաբերյալ փոխըմբռնման հուշագրի համաձայն՝ նախատեսվում է Հայաստանը կապել տեխնոլոգիական համաշխարհային կենտրոնների հետ՝ հենվելով Սփյուռքի հնարավորությունների ու ներուժի վրա: Ծրագիրը հաստատվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 297-Լ որոշմամբ:

2024 թվականին նշված նպատակով հատկացվել է 200 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ: Արդյունքում հնարավորություն կստեղծվի Հայաստանը դարձնել տարածաշրջանային տեխնոլոգիական կենտրոն՝ նպաստելով հայկական տեխնոարդյունաբերության ներկայացուցիչների և էկոհամակարգ ստեղծողների ներկայացվածությանը Սիլիկոնյան հովտում, որը կստեղծի նոր հնարավորություններ մասնագիտական հմտությունների զարգացման, նոր կապերի հաստատման և նոր շուկաներ մուտք գործելու հարցում:

12. 7-րդ բաղադրիչ՝ նախատեսվում է վերը նշված միջոցառումների իրականացման շրջանակներում կազմակերպել **տեղեկատվության հանրայնացում** շահառուների ավելի մեծ

ընդգրկվածություն ապահովելու համար: Բաղադրիչի իրականացման համար կպահանջվի 10 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ:

4. ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

11. Միջոցառման շահառուներն են՝

1) ԲՏ ոլորտի աշխատող մասնագետներ,

2) Հայաստանի Հանրապետությունում և Արցախում տեղի ունեցած մարտական գործողությունների մասնակիցներ (ընդունելության կարգն անցած բոլոր մասնակիցների համար բոլոր բաղադրիչների դասընթացները կլինեն անվճար):

3) Ցանկացած անձ, ով կտիրապետի մասնակցության համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներին:

5. ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

12. Ֆինանսական ծախսերի արդյունավետությունը գնահատելու համար ներկայացվելու է ընթացիկ աշխատանքների մասին հաշվետվություն, մասնավորապես ընդունված, սովորող և ավարտած մասնակիցների թվի վերաբերյալ ըստ ուղղությունների՝ ապահովելու տվյալների հստակ դինամիկա, թափանցիկություն և արդյունավետության չափելիություն: Ընթացիկ վերահսկողության համար ստեղծվելու են Նախարարության տարբեր ստորաբաժանումներից կազմված մոնիթորինգային խմբեր:

13. Միջոցառման ավարտին Նախարարություն է ներկայացվելու՝

1) 2024 թվականի ամփոփիչ կատարողական հաշվետվություն:

2) 2024 թվականի եկամուտների և ծախսերի մասին ամփոփիչ հաշվետվություն: